d - 25

Lmq
994

2013
A735

A 735

ԺԱՆՈ ԵՒ ԺԱՆԷՏ

Առաջին անգամ՝ Հայ—Թատրոնասէրներուն խումբը ներկայացուցեց Արծրունու Թատրոնում՝ յունիսի 6-ին 1879 ամի Տփխիս։

Լաց
994
A735
ԲՀ
33367

ԺԱՆՈ ԵՒ ԺԱՆԷՏ

ՕՊԵՐԱ - ՎՕԴԷՎԻԼ ՄԷԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Թարգմանեց

Գրիգոր Հաչբուդաղեան

Եբաժշտութիւնը առած է զանազան օպերաներից, բոմանսներից և բալէտներից. և մի քանի նոր հատուածներ շարադրած է պ. ԷՐԼԱՆԳԷՐ

ԼՈՌԻՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ
ԱՇԽԱՐՀ. ԳՐԱԳԱՐԱՆ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆՔ

1860

ԹԻՖԼԻՍ

Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան

1879

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Іюля 1879 г.

994-2013
18989

Тип. И. Мартиросіанца. на Орбеліан. улицѣ, д. № 5

ԺԱՆՕ ԵՒ ԺԱՆԷՏ

ՕՊԵՐԱ-ՎՕԴՎԻԼ ՄԷԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԱՆՁԻՆՔ

ԺԱՆՕ զբաշաբ.— (Մ. Պետրոսեան։)
ԺԱՆԷՏ, աղախին.—(Օր. Վ. Փաշայեան։)
ԺԻՐԱՖ, գիւղի զբաղեր.— (Գ. Զմշկեանց։)
ԿԼՕԴԻՆ, երիտասարդ գիւղացի աղջիկ.— (Օր. Ղուքաս-Եան։)

Գործողութիւնը կատարվում է Փարիզի շրջակայքում։

Բեմը ներկայացնում է մի սենեակ։ Առաջին կարգի վերայ երկու կողմում մէկ մէկ մեծ պատուհան։ Մէջ տեղը դուռը սանդուղքի գլխին։ Հանդիսատեսներից ձախ կողմը խոհանոցի դուռը, աջ կողմը գիւղական մեծ հնոց։ Բեմի խորքում պատին խված է մի լայն տախտակ, որի վերայ դարսած են ամանները։ Տախտակի տակ քաշ են արած պատից մէկ լայնակած պատակը և երկու կոպիտ պատակներներ, որոնցից մինը ներկայացնում է հիւպատոս Բօնապարտէին Սէնթ-Ելենաբեան լեռներում, իսկ միւսը մի սանձարձակ նորմանդական ձի։ Ձախ կողմը մէկ սեղան և երկու աթոռ։ Աջ կողմը վօլտերեան բազկաթոռ և ջահ-բա։ Սենեակի խորքում կերպարեղէնի պահարանն է։ Հնոցի մօտ դրած է սաւել և կողով։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՎ ՕՐԵՆՔ

ՕՊԵՐԱ-ՎՕԴՎԻԼ

Դոզволено цензурою, Тифлисъ, 8 Іюля 1879 г.

Тип. И. Мартиросіанца. на Орбеліан. улицѣ, д. № 5

ՏԵՍԻԼ Ա.

ԺԱՆԷՏ, կանգնած է ձախ կողմի պատուհանում և ծաղիկները կարգի է բերում։ Նա հագած ունի զոյնզոյն չթէ շրջազգեստ, նօրմանդական գլխանոց, ըզգեայ կօշիկ, կապոյտ մեծ գոգնոց և փայտեայ ատամանները մէջը յարդ։ Սորա հագուստը շատ անշնորհ ու կոպիտ պէտք է լինի, աւելի խիստ զանազանելու համար Ժանոյի շորից.

№ 1

Ինչ տխուր է Լիզէտան,
Էլ երեսին գոյն չունի.
Ինչու՞ հալվում, մաշվում է,
Ողջ գիշերը քուն չունի։
Առաջ նա միշտ երգում էր,
Ցանկարծ ըսկսեց տըխրել.
Գուցէ սրտիկն իմացաւ,
Թէ ժամանակ է սիրել։ (Կրկնել։)

ՏԵՍԻԼ Բ.

ԺԱՆԷՏ ԵՒ ԺԻՐԱՖ

ԺԻՐԱՖ, բեմի եռեւից ձախ պատուհանի տակ.

Բարով, հազար բարի, օրիորդ Ժանէ։

ԺԱՆԷՏ

Հարևան Ժիրաֆ . . . բարի առաւօտ, հարևան Ժիրաֆ։

ԺԻՐԱՖ

Իսկ ես ներքևից ձեր ոտիկները տեսնում եմ. հէ, հէ, հէ։ Շատ սիրուն ոտիկներ էք ունեցել։

ԺԱՆԷՏ

Ա՜, ա՜... ինչ անենք, նայեցէ՛ք, մի վախենաք.

ձեր ծոի ոտներից խօ լաւ են։ (Հասարակութեան.) Իսկ որ ծոի ոտներ ունի, բարա՛կ բարա՛կ։ (Թըռչելով։)

ԺԻՐԱՖ

Օրիորդ Ժանէտ, կարելի՞ է ներս գալ։

ԺԱՆԷՏ

Չէ՛, աւելի լաւ է մի ուրիշ անգամ, իսկ այժմ առանց ձեզ էլ շատ բան ունիմ։ Ես այսօր սպասում եմ նոր տանտիրոջս, պարոն Ժանոյին՝ իմ հանգուցեալ կնքահօր քրոջ որդուն։

ԺԻՐԱՖ, յանդիմանութեամբ.

Դուք այդ ամէն օր էք ասում։

ԺԱՆԷՏ

Որովհետև նորան ամէն օր սպասում եմ։ Մի՞թէ ես մեղաւոր եմ որ նա չէ գալի . . .

ԺԻՐԱՖ

Գիտէ՞ք ինչ է . . . Ես կ'երթամ իջևանը, կ'իմանամ կառքը եկել է թէ չէ, և շուտով կը վերադառնամ։

ԺԱՆԷՏ

Շատ լաւ, գնացէ՛ք։ Շատ կարելի է, պարոն Ժանոն եկած լինի, այն ժամանակ դուք նորան ուղղակի այստեղ բերէք։

ԺԻՐԱՖ

Էլ ի՞նչ ասել կ'ուզէ։ Ուրեմն ես կը վազեմ . . . Մնաք բարով։ (Լսվում է երկու համբոյրի ձայն։)

ՏԵՍԻԼ Գ.

ԺԱՆԷՏ, մենակ.

Ի՜նչ ծաղրելի է այս Ժիրաֆը . . . Ոտները, ոտները կարծես թէ հիւսվում լինէին . . . Ինչ-

պիսի աղջիկ եմ ես ճշմարիտ. 'ի զուր ժամանակ կորցրի նրա հետ խօսելում, իսկ սենեակս մնաց աւելելու։ (Վերցնում է աւելն ու աւելում է։) Շատ ցանկալի էր իմանալ, թէ ինչու այս պարոն Ժանոն այսքան ժամանակ է չէ գալիս։ Ահա երկու ամիս է, ինչ նրան նամակ ենք գրել, թէ նորա մօր եղբայրը և իմ կնքահայրը հոգին աւանդեց։ Ուրիշը նորա տեղ գլխապատառ մի բոպէում կը դար ժառանգութիւնն ստանալու, իսկ նա չէ էլ մտածում գալ . . . (Գնում է աւելը անկիւնում.) Ճշմարիտն ասած, ես էլ ոնց որ տխուր եմ մենակ. մի ոնց որ կեանքի նշան չկայ առանց տանտիրոջ, կարծես մի ինչ որ պակաս է։ Ամէն ասածու օր տեղաւորում եմ, աւելում եմ, սրբում եմ։ Ինձ ու ինձ կարծում եմ թէ ահա, հէնց այսօր կը գայ, բայց չէ. էլի չէ գալի։ Եւ միակ մէկ մխիթարութիւն կայ, որ երգ եմ երգում։ (Սրվելու միջոցին նրասում է և մանում։)

№ 2

Եւ չէ բուրում էլ վարդը
Նորա սիրուն թշերից.
Արցունք անդամ հոսում են
Նրա սէգ, հպարտ աչերից։
Ինչու սկսեց Լիզէտան
Ցանկարծ տխրել, ախ քաշել.
Գուցէ սրտին իմացաւ,)
թէ ժամանակ է սիրել։) (Կրկնէ։)

ՏԵՍԻԼ Դ.

ԺԱՆԷՏ ԵՒ ԺԻՐԱՖ

ԺԻՐԱՖ, բեմի եռեվից.

Օրիորդ Ժանէ՛տ, օրիորդ Ժանէ՛տ . . . Ես եմ,

ես, Ժիրաֆը։

ԺԱՆԷՏ, մօտենալով պատուհանին.

Ի՞նչ էք կամենում։

ԺԻՐԱՖ, պատուհանի տակից.

Եկա՛, եկա՛։

ԺԱՆԷՏ

Չէ՞. իրա՛ւ, եկա՛։

ԺԻՐԱՖ

Իմ աչքովս տեսայ։ Ահա ինքն էլ իր ոտով գալիս է։ Տեսնում էք. ահա այնտեղ, ծառերի մօտ . . . այս կողմի ծառերի . . . Դէ՞հ, մնաք բարով։ (Լսելուն երկու հոմբոյլի ձայն։)

ԺԱՆԷՏ

Ա՞խ, Աստուած իմ, բայց ի՞նչ սիրունացել է։ Տղամարդ է դառել էլի . . . (Սկսվում երկրորդ նոմէրի բէյուրները) Գնամ հանդիպեմ . . . (Կանգնելով.) Ոնց որ սիրուս վատ է դառնում, ճշմարիտ սարսափելի է . . . Ողջ մարմնովս դողում եմ. (Նստում է դռնեքի մօտ.) Ա՞խ, աչքերս մթնում են . . . Գալիս է . . . Չէ՞, աւելի լաւ է, դուրս վազեմ . . . (Դուրս է վազում։)

ՏԵՍԻԼ Ե.

ԺԱՆՈ, հագած ունի դիրեկտորիայի ժամանակի զուգվող երիտասարդի շորը, ձեռքին բռնած մի փոքր վայր.

№ 3

Կ'ուզեմ կանաչ այգիներում
Սիրուհուս հետ ապրել սիրով.
Զը լսելով յիմարներուն,

Կեանքը անցնել միշտ անխնամ։
Երգ, սիրուհի և լաւ գինի,) (Կրկնէ։)
Ահա ժանօն ի՞նչ կը հաւնի։)

Կ՚ուզեմ նոյնպէս միշտ թուղթ խաղալ,
Եւ Լաֆիտի շիշի առաջ
Ընկերացս հետ զուարճանալ,
Խաղալ, անհոգ, մինչ լուսաբաց։
Երգ, սիրուհի և լաւ գինի,) (Կրկնէ։)
Ահա ժանօն ինչ կը հաւնի։)

Նոր ճաշակով, լաւ զուգվելով,
Կ՚ուզեմ զբօսնել բուլվարներում։
Սիրաբորբոք, կրակոտ գրգիռ
Վառել տիկնանց սրտիկներում։
Եւ նրանք վազուց արդէն գիտեն,) (Կրկնէ։)
Թէ ժանօյին ոնց հանդիպեն։)

Այս ի՞նչ է, մի հոգի էլ չկայ . . . Ամենքն ուր որ կորել գնացելեն, դռներն էլ բաց են թողել։ Էլ ի՞նչ ասել կ՚ուզէ, լաւ են մտիկ տալի տանը։ Է՜յ, ով կայ այդտեղ։ (Խփում փայտով սեղանին.) Մէկն ու մէկդ։ Ա՜խ, մոռացայ որ այս բոլորն իմն է։ Քիչ մնաց սեղանը ջարդ ու փշուր էի անում։ Է՜յ, է՜յ։

ՏԵՍԻԼ Զ.

ԺԱՆՕ ՆԻ ԺԱՆԷՏ

ԺԱՆԷՏ

Ի՞նչ կը հրամայէք . . .

ԺԱՆՕ

Այս ի՞նչ նոր թռչնակ է . . .

ԺԱՆԷՏ

Բարև ձեզ, պ. ժանօ։ Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, պ. ժանօ . . .

ԺԱՆՕ

Ոչինչ, փառք Աստուծոյ, առողջ ենք . . . (Առանձին.) Ի՞նչ լաւն է։ (Ձեռքը կզակին տանելով.) Բարե՛ւ, բարե՛ւ։

ԺԱՆԷՏ

Ի՞նչպէս հասաք մինչև այստեղ։

ԺԱՆՕ

Ոչինչ, լաւ հասայ . . . բայց քեզ ինչ, թռչնակ, թէ ինչպէս հասայ . . .

ԺԱՆԷՏ

Բայց էլի . . . ի՞նչպէս չէ։

ԺԱՆՕ, առանձին.

Շատ լաւն է։ Ինչ սիրուն, գրաւիչ աչիկներ ունի . . . (Նորան.) Ի՞նչ է քո անունը։

ԺԱՆԷՏ

Ի՞մը . . . ժանէտ . . . (Գլուխ է տալիս։)

ԺԱՆՕ

Ա՜, ա՜, ուրեմն դու ես, թռչնակ, այստեղի տանտիկինը։

ԺԱՆԷՏ

Այո՛, ես եմ։ Ես ձեր մօրեղբօր կենդանութեան ժամանակ կենում էի նորա կալուածքում, գիտէք, այնտեղ, անտառում, գետի ափը . . . բայց երբ ծերունին հիւանդացաւ, հրամայեց որ այստեղ տեղափոխուիմ. «հոգա» ասում է «ինձ վերայ»։ Ես հիւանդին պահում, պահպանում էի . . . (Արտասուելով.) Բայց երևի Աստուծոյ կամքն էր, — ոչինչ չօգ-

նեց . . . Ես մեղաւոր չեմ . . . Դուք ինձ վերայ մի՛ բարկանաք, Աստուած սիրէք . . .

ԺԱՆՆՕ

Ես մոքովս անգամ չեմ անցնում քեզ վրայ բարկանալու։

ԺԱՆԷՏ

Ես շատ լաց եղայ, շատ . . . ահա, հիմայ էլ որ յիշում եմ . . .

ԺԱՆՆՕ

Դադարի՛ր։ Հարկաւոր չէ։ Լացից ի՞նչ օգուտ։ Մեռելը խօ չի կենդանանայ . . . (Առանձին.) Ամենաբարի արարած է էս թռչնակը . . . Երևի շատ զգայուն սիրտ ունի . . . (Գնում, նստում է աջ կողմը։)

ԺԱՆԷՏ

Իսկ ձեզ սպասեցի, սպասեցի, աչքերս ջուր կըտրուեցան . . .

ԺԱՆՆՕ

Ճշմարիտն ասած, փոքր ինչ ուշացայ։ Երբ նամակն եկաւ թէ մօրեղբայրս մեռել է, մի քէֆ արի որ իմ կեանքումս չեմ մոռանալ։ Եւ ի՞նչպէս քէֆ չանէի։ Ես չէի կարծում, յոյս չունէի թէ ժառանգութիւն կըստանամ։ Հաստատ հաւատացած էի որ ծերունին կտակ կը չինէ և մի ուրիշին կը նուիրէ և տունը և կալուածքը։

ԺԱՆԷՏ

Ինչու՞ էիք այդպէս կարծում։

ԺԱՆՆՕ

Որովհետև նա ինձ շատ էլ չէր ափսոսում . . . Երբ կը պատահէր որ մի մի անգամ կը գայ նորա տունը, այնպէս խայտառակումէր ինձ որ, Աստուած ազատէ։ Ճշմարիտն ասած, այս ծերունիքը ամենամելամաղձոտ արարածներն են . . . Նրանց օրէնքով պէտք է ոչ երգել, ոչ պարել, և ոչ էլ սիրուն աղջկերանց եռևից ընկնել։

ԺԱՆԷՏ

Այդ պատճառաւ էլ նա ձեզ համար միշտ ասում էր. «Իմ քրոջ որդին շատ փուչ կենդանի է»։

ԺԱՆՆՕ, հազալով.

Հա՛ . . . Նա այդ ասում էր . . . Շնորհակալ եմ որ ասացիր։ (Առանձին.) Անկի՛րթ։ (Վեր է կենում.) Բոլորովին անկիրթ է։ (Նորան.) Թող ինչ ուզում են ասեն. ես այժմ հարուստ եմ և կարող եմ այնպէս ապրել, ինչպէս սիրտս ուզէ։ Այլ ես գործի գլուխ չունեմ։ Ամբողջ օրը ձեռքերս ծալած կը նստեմ, կ՚ուտեմ, կը խմեմ, որքան սիրտս ուզէ . . . թուղթ կը խաղամ, կը պարեմ . . . Ձեր գիւղումը պարում են։

ԺԱՆԷՏ

Ո՛չ, շատ սակաւ։

ԺԱՆՆՕ

Մի՞թէ։ Իսկ ես սիրում եմ պարել. և ուզում եմ որ իմ տանը ամէնքը պարեն։ Ես կը պարեմ, դու կը պարես, մենք ամենքս կը պարենք, իմ փոքերն էլ կը պարեն։

№ 4

Երկուսով մենք, Ժանէտ,
Ողջին կ՚ուրախացնենք.
Մինչև լուսաբացը
Պարով կը կշտացնենք։
Եւ ինչու՞ տրխրել,

Երբ չատ վաղուց
Ընդունուած է
Ուրախ, անհոգ պարել։

Եւ ես յիշում եմ,
Ի՞նչպէս մենք պարել ենք.
Եւ մեր ճարպիկ պարով
Ողջին զարմացրել ենք։

Երկուսով մենք, Ժանէտ և այլն։

ԺԱՆԷՏ

Այս ի՞նչ պատահեցաւ սրան. չատ կարելի է գը-
լուխը պտոյտ եկաւ, և իմ գլուխն էլ պտոյտ եկաւ . . .
ոչինչ չեմ տեսնում։ (Ընկնում է աթոռի վերայ։)

ԺԱՆՈ

Ինչ է՞ . . . սիրտդ խառնվում է . . . (Խփում
է ձեռքերին.) Էյ, հիմի հնց ես, թռչնա՛կ . . .

ԺԱՆԷՏ

Դուք պտոյտ բերիք ինձ . . . Պտոյտ գալուն ես
սովոր չեմ։

ԺԱՆՈ, հովահարում դաշտինակով.

Այո՛, այո՛, այո՛։ (Առանձին.) Անկիրթների թա-
գուհին է եղել։

ԺԱՆԷՏ, յիմար ծիծաղելով.

Իրաւ ծիծաղելի է . . . Հէնց իմանաս թէ գի-
նի եմ խմել, հարբել եմ . . . Հէնց գիտէի թէ
սենեակս գլխիս պտոյտ էր գալիս . . .

ԺԱՆՈ

Գինի ասիր ու միտս եկաւ . . . Գնա՛ երկու
շիշ գինի բեր։

ԺԱՆԷՏ

Երկու շի՞շ . . . Ձեզ մենակ։

ԺԱՆՈ

Ի՞նչ զարմանալու բան է։ Մի բան էլ բեր ու-
տեմ . . . թէ չէ փորս վեց վեց է անում։

ԺԱՆԷՏ

Ի՞նչ բերեմ։

ԺԱՆՈ

Ողջը մին է։ Ի՛նչ որ ունես։

ԺԱՆԷՏ

Ձէ՞ք կամենայ արդեօք, տանձ, խնձոր կամ սա-
լոր։ Սարտափումը բորբոնած ածած են . . .

ԺԱՆՈ

Ի՞նչպէս թէ բորբոնած . . . . .

ԺԱՆԷՏ

Երկու ամիս կայ արդէն, ինչ որ քաղել ենք։

ԺԱՆՈ

Ինչու՞ ինքդ չկերար։

ԺԱՆԷՏ

Ի՞նչպէս կարող էի ես ուտել . . . չէ՞ որ այն
մրգերը ձերն էին, տանտիրոջը . . .

ԺԱՆՈ, առանձին։

Ո՜ւհ, ի՛նչ անկիրթն է եղել։ Ես դեռ սրա նմանը
չեմ տեսել։ (Նորան.) Ճարի՞ր ինձ համար բաղ։ Գի-
տես ինչ է բաղը։

ԺԱՆԷՏ, ծիծաղելով.

Օ՜ օ՜, ի՞նչպէս չէ։

ԺԱՆՈ

Սալաթան էլ խո գիտես ինչ է։

ԺԱՆԷՏ, ծիծաղելով.

Գիտեմ։ Մեր բանջարանոցում դրանից աւել ինչ կայ։

ԺԱՆՕ

Ուրեմն ճաշին բեր ինձ համար բաղ սալաթով։ Բաղը խորովիր, հասկանում ես։— Խորովիր, հասկանում ես։

ԺԱՆԷՏ

Հասկացայ։

ԺԱՆՕ

Դէ՛հ, փառք Աստուծոյ որ հասկացար. շատ ուրախ եմ . . . Բայց չուտ արա, որքան կարող ես . . .

ԺԱՆԷՏ

Իմանում եմ . . . (Առանձին.) Ի՞նչ պատահեցաւ սրան։

ԺԱՆՕ, ընթերցով նրան.

Դէ՜հ, էլ ի՞նչ ես կանգնել. գնա՛ էլի . . .

ԺԱՆԷՏ

Գնում եմ . . . (Կամաց դուրս է գնում։)

ՏԵՍԻԼ Ը.

ԺԱՆՕ, մենակ.

Դէ՛հ, ձեզ եմ հարցնում . . . այս աղջկանից էլ յիմար ու անկիրթ աղջիկ կը լինի՞ աշխարհումս . . . Բայց ա՜խ տ՜ս, շատ ա՜խ տ՜ս. ախր նա ամենասիրուն աչքեր ունի, մազերը կարծես սև սաթ լինին, ձեռքերն էլ նոյնպէս գեղեցիկ են . . . Բայց ի՞նչ եմ ասում. նա ինքը ամբողջապէս գեղեցիկ է։ Բայց միևնոյն ժամանակ ի՛նչ յիմար է. Աստուած

աղատէ. Եւ պէտք է ձեզ ասեմ որ ես աչքով չեմ կարող տեսնել յիմարներին. Չգիտեմ թէ դուք ի՛նչ էք կարծում, բայց ես աչքով չեմ կարող տեսնել։ Ես սիրում եմ, գիտէք, այնպիսիներին, որոնք ուրախ, սրտաբաց են. իմանում են երգել, պարել, ծիծաղել. ահա՛ ես այսպիսիներին եմ սիրում։ Գիտեմ թէ դուք ինչ էք կարծում, բայց ես այսպիսի ճաշակ ունիմ։ (Նստում է ձախ կողմի սեղանի մօտ.) Սակայն այստեղ լաւ է։ Շատ լաւ է . . . և այս բոլորն իմս է։ Ահա՛ թէ բանն ինչումն է։ (Բացում է արկղը և հանում փողերը.) Փողեր . . . Տունն իմն է, սեղանը նոյնպէս իմն է, նշանակում է փողերն էլ իմն են. (Փողերը զրպանն է ածում.) Չէ՛ բաղդս բանում է։

ՏԵՍԻԼ Ը.

ԺԱՆՕ ԵՒ ԺԱՆԷՏ

ԺԱՆԷՏ, ներքում է երկու շէշ գինի.

Ահա՛, համեցէ՛ք, պարոն . . . Իսկ բաղը խորովում է չամիրի վրայ։ (Կանգնում է աթոռի վրայ և դարսում թարելքի վերայ։)

ԺԱՆՕ

Ցոյս ունիմ որ մոռացած կը լինիս պլոկել բաղը։

ԺԱՆԷՏ, բանալով գոգնոցը.

Ի՞նչպէս կարելի է . . . ահա՛ նրա փետուրները։

ԺԱՆՕ

Իսկ սալաթա՞ն։

ԺԱՆԷՏ

Բաղեցի։

ԺԱՆՆՕ

Լա՛ւ . . . (Առանձին.) Ճշմարիտ որ սա չափից դուրս գեղեցիկ է . . . (Նրան.) Ժանէ՛տ։

ԺԱՆԷՏ

Ի՞նչ էք կամենում։

ԺԱՆՆՕ

Ինչու՞ չես մտենում . . . Մօտ արի . . . Ես քեզ չեմ ուտի . . .

ԺԱՆԷՏ, առանձին.

Ախ Աստուած իմ, ինչ աչքերով է նայում ինձ։

ԺԱՆՆՕ

№ 5

Դէհ, մօտեցիր.

ԺԱՆԷՏ

Ես մօտեցայ։

ԺԱՆՆՕ

Քիչ էլ. ինչի՞ցն ես վախենում։
Ա՞խ չեմ կարող քեզ չը սիրել
Եւ քեզ, Ժանէտ, չը համբուրել։ (Ուզում է համբուրել, բայց նա յետ է քաշվում։)

ԺԱՆԷՏ

Ես չեմ ուզում։

ԺԱՆՆՕ

Ինչու՞ համար.
Եւ այստեղ ի՞նչ մէկ մեծ յանցանք կայ

ԺԱՆԷՏ

Թէև այստեղ յանցանք չը՞ կայ,
Բայց ոչոքի ես կամք չեմ տա.
Ուր որ հարս ու փեսայ չը կայ,
Այնտեղ համբոյրը ՁԼաս կը տայ։

ԺԱՆՆՕ

Համբուրելում ՁԼաս չը կայ,
Գլխիցդ յիմար բան մի դուս տա։

Չէ՛, առանց այլեայլութեան սորան այստեղից դուրս կ՚անեմ։ Սարսափելի յիմար է։ (Ուրախ.) Բացի սորանից այս գիւղում ես ունիմ մի ծանօթ աղջիկ. այնպէս հաստլիկ, չաղ ու սիրուն, որ խօսք չկայ . . . Ես այսպիսիներին եմ սիրում . . . Զը գիտեմ թէ դուք ի՞նչ էք կարծում, բայց ես այսպիսիներին եմ սիրում . . . (Նրան.) Հը՛, Կլօդինան ողջ առողջ է՞ . . .

ԺԱՆԷՏ, վեռուբները կողմն ածելով.

Այո՛, պարոն։

ԺԱՆՆՕ, հանում է գրպանից կաւէ չիբուխ.

Նա դեռ էլի գիւղումն է։

ԺԱՆԷՏ

Այո՛, դեռ էլի . . . բայց . . . ախր . . . Դուք գուցէ չգիտէք, պարոն . . .

ԺԱՆՆՕ

Ի՞նչ . . . որ նա մարդու է գնացել, ի՛նչ է։

ԺԱՆԷՏ

Օ՛, չէ՛ . . .

ԺԱՆՆՕ, լցնելով չիբուխը.

Հապա ի՞նչ է.

ԺԱՆԷՏ

Նրա վրայ շատ վատ են խօսում . . . Ասում են որ նա ուզում էր փախչել . . .

ԺԱՆՆՕ

Ո՞ւմ հետ.

ԺԱՆԷՏ

Մի ինչ որ անպիտան մարդու հետ։

ԺԱՆՆՕ, չիբուխը կրակ տալով.

Երկու տարի սրանից առաջ։

ԺԱՆԷՏ

Այո՛։

ԺԱՆՆՕ, աջ կողմն անցնելով.

Դէ՛հ, չնորհակալ եմ ինձ պատուելուդ համար. այն անպիտանը ես էի։

ԺԱՆԷՏ

Դուք. անկարելի է, երբէ՛ք չեմ հաւատա . . .

ԺԱՆՆՕ, նստում է և ծխում.

Կ՚ուզես մի՛ հաւատար։

ԺԱՆԷՏ

Ո՛չ, դուք այնպէս հանաք էք անում։ Ես չեմ ուզում անգամ մտածել թէ դուք կամենայիք խաբել խեղճ աղջկան . . .

ԺԱՆՆՕ

Ի՛նչ ուզում ես մտածիր, միայն թէ գնա և իսկոյն և եթ կանչիր ինձ մօտ Կլօդինային . . . (Տեղից չէ շարժվում.) Դէ՛հ, ի՞նչ մեխուեցար։

ԺԱՆԷՏ

Ո՛չ, ես չեմ գնա . . .

ԺԱՆՆՕ

Այս ի՞նչ է։ Ինչու չես գնալ . . .

ԺԱՆԷՏ

Նորա համար . . . Նորա համար որ նա անարատ աղջիկ չէ՛։

ԺԱՆՆՕ

Ի՞նչ անենք. գնա

ԺԱՆԷՏ

Մի լաւ մտածեցէ՛ք, ի՞նչ կ՚ասեն գիւղում . . .

ԺԱՆՆՕ

Թքեմ ես ձեր գիւղի վերայ . . . Դէ՛հ, էլ ինչի՞ն ես սպասում. գնա . . . Նշանակում է դու ինձ չես ուզում հնազանդուել, ա՞։

ԺԱՆԷՏ

Ինչպէս կամենումէք, պարոն. կ՚ուզէք դուրս արէք ինձ, միայն թէ ես չեմ գնայ Կլօդինայի մօտ։ Հայրս էլ որ վեր կենայ գերեզմանից. դարձեալ չեմ գնայ, որովհետև այնտեղ գնալով անունս պիտի կոտրեմ . . . Այո՛, պարոն, բայց անունը մարդու համար թանգ արժէ։

ԺԱՆՆՕ

Ինչպէսն է հա՝ ինձ է ուզում սովրեցնել։ (Վեր է կենում.) Էլ ի՛նչ գլուխս ցաւացնեմ քեզ հետ . . . Ես տանտէրն եմ, և անում եմ ինչ որ ուզում եմ, ի՛նչ սիրտս տալիս է . . . Լսումես, հասկանումես . . . Այժմ ցանկանում եմ ինքս գնալ Կլօդինայի մօտ։ Ես ինքս կ՚երթամ նրա մօտ . . . հասկանումե՞ս։ Իսկ խորհուրդ տալ դու կարող ես միայն նրանց, որոնք քեզնից աւելի յիմար են, եթէ միայն կը գտնես աշխարհումը քեզնից էլ յիմար . . .

(Ելնում է)

№ 6

ԺԱՆԷՏ

Նորան համոզել ու յետ պահել կարող չեմ. Դրանց մօտ մնալով անունս պիտ՚ կոտրեմ.

994-2013

Ստիպուած այժմ իսկ չորերս կ'հաւաքեմ,
Եւ կնքահօրս տունը ցաւելով կ'թողնեմ։

ԺԱՆՆՕ

Հովհաննէսի Կլօդինայի հետ ցանկանում եմ
Այս գիշեր քէֆ քաշել, զուարճանալ ու պարել.
Իսկ քեզ, իմ Ժանէտ, խոնարհաբար խնդրումեմ,
Շուտով և անձայն իմ տունը թողնել։

ԺԱՆՆՕ

Հովհաննէսի Կլօդինան այնպէս կ'ուրախանայ,
Որ նրա հետ իսկոյն կը վերադառնամ։

ԺԱՆԷՏ

Իսկ ես առաջուց կը տեղաւորեմ տունը,
Որ այս նոր դժոխքից շուտով հեռանամ։

ՏԵՍԻԼ Թ.

ԺԱՆԷՏ. *մենակ.*

Ա՜խ Աստուած իմ։ խեղճ երիտասարդ մարդ. Տեսնում եմ որ բոլորը ճիշտ էր ասում խեղճ կընքահայրս. թէ. «նա բոլորովին փչացել է» . . . Ի՞նչպէս կարելի է այդպէս անկարգ կեանք անցնել . . . Այդ տղայից լաւ բան չի գուրս գա. և ի՞նչ լաւ բան կարող էր գտնել նա այն անպիտան Կլօդինայի մէջ . . . Իրաւ որ ոչինչ . . . Բայց այդ ինչ իմ բանն է. ի հարկ է որ չէ . . . Բայց ինչո՞ւ ինձ այդպէս անախորժ, այդպէս ցաւալի է թվում այդ . . .

№ 7

Իմ երեսս կարմրում է.
Բաբախում են երակներ.
Արդեօք ի՞նչ են գուշակում,

Մի՞թէ անկեղծ ջերմ սէր։
Պէտք է կրեմ վիշտ թախիծ
Խեղճ օրիորդս ամբիծ.
Զարհուրում եմ, վախենում,
Երբ ապագաս եմ յիշում։
Եւ ինչո՞ւ
Ես նորան
Չէնց այսօր իսկ տեսայ.
Երբ այլ ես
Չեմ կարող
Նրան ընտրել իմ փեսայ։

Իմ երեսս կարմրում է. (Լայլն)։

Մին էլ տեսնես պ. Ժանօն Կլօդինայի հետ կը գայ այստեղ. ինձ վայել չէ մնալ այստեղ նրա հետ։ Ո՛չ, աւելի լաւ է, բոլորովին հեռանամ այստեղից։ Կը հաւաքեմ իմ ունեցած չունեցածս։ (Գնում է, հանում պահարանից իրերը և ցոյց է տալիս հանդիսականներին.) Իմ տօն օրուայ շորս. իմ գլխի կարմիր փաթաթելուն։ Երկու գոգնոց. Ոսկէ խաչ, որ ընծայեց ինձ կնքահայրս իմ ծննդեան տօնին . . . Ա՜խ, Աստուած իմ. այս այն թուղթն է . . . Ես մինչև անգամ մոռացել էի այդ . . . Շատ լաւ է. Եւ կնքահայրս հոգին տալիս անդադար խնդրում էր, որ նրա մեռնելուց յետոյ իսկոյն տանեմ այս թուղթը նօտարիուսի մօտ . . . Իսկ ես, կարծես թէ դիտմամբ, մոռացել էի։ Սորա համար պ. Ժանօն շատ կարելի է, մի լաւ կ'անպատուէ ինձ . . . Եւ արժանի եմ, ուրիշ անգամ էլ չեմ մոռանայ։

ՏԵՍԻԼ Ժ.

ԺԱՆՆՈ ԵՒ ԺԱՆԷՏ

ԺԱՆՆՈ, *ներս մտնելով.*

Զը կարողացայ Կլոդինային գտնել, ասում են միրգ քաղելու է գնացել . . . Ես ասացի որ նորան այստեղ ուղարկեն . . . (*Նստում է.*) Ահա, ինչքան մանր մունր բաներ գնեցի գիւղում . . . (*Դասում է սեղանի վրայ.*) Օրիորդները շատ են սիրում մանր մունր բաներ։ Երբ Կլոդինան կը գայ, կ'ընծայեմ նորան. նա էլ կ'ուրախանայ, շատ կը ծիծաղի։ Ես սիրում եմ, երբ ծիծաղում են . . . Զգիտեմ թէ ձեր ճաշակն ի՞նչպէս է, բայց ես այսպիսի ճաշակ ունիմ . . . (*Նկատելով Ժանէտին.*) Այդտեղ ի՞նչ ես չինում։

ԺԱՆԷՏ

Իմ ունեցած չունեցածս եմ կապում.

ԺԱՆՆՈ

Ինչո՞ւ համար։

ԺԱՆԷՏ

Ես . . . ես կամենում եմ հեռանալ ձեզնից . . .

ԺԱՆՆՈ

Դու ո՞ւր կ'երթաս։

ԺԱՆԷՏ

Զգիտեմ. մի տեղ կը կանգնեմ վարձով։

ԺԱՆՆՈ

Հմ . . . Բայց ես քեզ չեմ դուրս անում, թըռչնակ . . . Թէ ինձ կը հարցնես, լաւ է տեղդ կենաս . . . Ինձ համար ողջը մին է։

ԺԱՆԷՏ

Մեծապէս շնորհակալ եմ, պարոն. բայց աւելի լաւ է ես դուրս կ'երթամ . . .

ԺԱՆՆՈ

Ինչո՞ւ համար աւելի լաւ է. ասա . . .

ԺԱՆԷՏ

Նրա համար աւելի լաւ է, որ ես էլ ձեզ չեմ խանգարի։ Դուք կարող էք ամէն բան անել, ինչ ձեր սիրտն ուզէ. Աւելի լաւ է, ես կ'երթամ։

ԺԱՆՆՈ, *անցնելով աջ կողմը.*

Աստուած քեզ հետ։ Մնա՞ս բարով։

ԺԱՆԷՏ, *վշտալի.*

Մնա՛ք բարով, տանտէր։

ԺԱՆՆՈ, *շուտով.*

Գնա՛ս բարով, գնա՛ս բարով, գնա՛ս բարով. . . . Էլի ի՞նչ ես կամենում . . .

ԺԱՆԷՏ

Ներեցէ՛ք ինձ վերջին մնաս բարովի ժամանակ։ Ես մուռացայ կնքահօրս մահից յետոյ յանձնել այս թուղթն ո՛ւր հարկն է . . .

ԺԱՆՆՈ

Ի՞նչ թուղթ . . . տեսնե՛մ։

ԺԱՆԷՏ

Համեցէք . . .

ԺԱՆՆՈ, *կարդալով վերնագիրը.*

Մօրեղբօրս ձեռքն է . «Իմ մահից յետոյ անյապաղ յանձնել Նոտարիուս Մէգրիոյին». Այս ի՞նչ թուղթ է. կարդամ . . . (*Կարդում է, աղաղակում և ընկնում աթոռի վրայ.*) Ա՜խ . . .

ԺԱՆԷՏ

Պարո՛ն . . .

ԺԱՆՆՈ, *շփոթուած.*

Չէ՛։

ԺԱՆԷՏ

Ի՞նչ։

ԺԱՆՆՕ

Այո՛։

ԺԱՆԷՏ, կրկնելով.

Ի՞նչ եղաւ ձեզ, պարոն . . . Ինչո՞ւ այդպէս գուշնաթափեցաք . . . (Ժանոն չէ կարողանում խօսել և մրմրում է։) Պարոն, կ՚երթամ մեր բժշկի մօտ . . .

ԺԱՆՆՕ

Կա՛ց . . . Չհամարձակուիս, մի՛ գնա . . . Ե՛կ այստեղ. (Ոտները թաւ տալով.) Ե՛կ այստեղ. (Նայում է թղթին.) Եւ ի՛նչ մեծ տառերով էլ է ձեռք քաշել. աւաղա՛կ։

ԺԱՆԷՏ, առանձին.

Ես առաջուց գիտէի որ սա կը բարկանայ։

ԺԱՆՆՕ

Դո՛ւ . . . գիտե՞ս արդեօք ինչ է այստեղ գրած ա՜ . . . Պատասխանի՛ր. կարդացե՞լ ես։

ԺԱՆԷՏ

Ես կարդալ չգիտեմ . . .

ԺԱՆՆՕ, վեր է կենում.

Եւ ոչ ոքի . . . չե՞ս ցոյց տուել։

ԺԱՆԷՏ

Ոչ ոքի . . . Ես բոլորովին մոռացել էի այդ թուղթը . . .

ԺԱՆՆՕ

Ա՜ . . . (Ուզում է հնել թուղթը բայց կանգնում է) Չէ՛, այս արդէն անաղնուութիւն կը լինէր . . . Ժանո, դու շառլատան ես, թուղթ խաղացո՛ղ, անպիտա՛ն. բայց դու ոչ մի անաղնիւ գործ չպիտի կատարես . . . Այո՛ . . . Ինչպէս երևում-է, եղբայր, այդպէս է քո ապերջանիկ բաղդը. սատանան տանի այդ բաղդին . . . (Ման է գալիս բեմի վերայ.) Նը-

չանակում է ճակատիդ գրուած է, որ դու յաւիտեան քաղցած ծարաւ պէտք է մնաս այս յիմար աղջկայ շնորքով, և ռէխը, ռէխը։ Ո՜հ, ինչ յիմար ռէխ ունի . . . Թո՛ւ . . .

ԺԱՆԷՏ

Այդ ո՞ւմ վրայ էք թքում։

ԺԱՆՆՕ

Քե՛զ վերայ. այո՛։ Մօրեղբայրս քեզ իւր ժառանգն է շինել, այս նորա կտակն է։

ԺԱՆԷՏ

Հէնց այս թո՞ւղթը։

ԺԱՆՆՕ

Իբրև թէ ոչինչ չգիտէի՞ր։

ԺԱՆԷՏ, գլուխը ձեռքերով բռնելով.

Չէ՛, իրաւ։ Դուք ճշմարի՞տ էք ասում։ Այդ չի կարող լինել, դուք հանաք էք անում . . .

ԺԱՆՆՕ

Քեզ ասում են որ ճշմարիտ է, ճշմարիտ ու ճըշմարիտ։

ԺԱՆԷՏ, ծաղր տալով.

Ճշմարիտ է . . . հա, հա, հա. (Ուրախ թռչկոտում է.) Այդպէս ուրեմն այս բոլորն իմն է—բոլորը . . . բոլորը։ (Առանձին.) Ա՛խ, Աստուած իմ։ (Կանգնում է.) Այս ի՞նչ եմ ասում . . . ախր այս բոլորը ինձ չպիտի հասնէր։

ԺԱՆՆՕ

Տար կտակը նոտարիուսի մօտ . . . Խորհուրդ եմ տալիս չը կորցնել ճանապարհին . . .

ԺԱՆԷՏ, վերցնելով թուղթը.

Ինչ կը լինի որ կորցնեմ։

ԺԱՆՆՕ

Դո՛ւ կը վնասուիս։

ԺԱՆԷՏ

Ինչո՞ւ։

ԺԱՆՆՕ

Որովհետև այն ժամանակ ժառանգութիւնը դարձեալ իմ ձեռքս կ՚անցնի։

ԺԱՆԷՏ, *կամաց.*

Այո՛, այո՛, նշանակում է եթէ պապուտեմ այս թուղթը, դարձեալ միենոյնը կը լինի։

ԺԱՆՆՕ

Ի հարկէ։

ԺԱՆԷՏ

Օտարինը ինձ հարկաւոր չէ՛... (Պատռտում է թուղթը.) Ահա՛ կտակն էլ պատռտված է։

ԺԱՆՆՕ, *աշխոյժ.*

Ա՜, այդ ի՞նչ ես անում... (Սկիսը շարժած.) Ես կարծում էի թէ սա ծերունուց ուժով խլել է, իսկ սա, տեսնում է՛ք. բոլորովին անմեղ է... Ահա՛ թէ սա ինչ է։ Ա՜ ես անպիտանս... Սա պահում էր հիւանդին, հոգս էր քաշում նորա վերայ, այն ինչ ես այդ միջոցին խնջոյքներ ու պարահանդէսներ էի սարքում։ (Խփում է իրան բռունցքով.) Ահա՛ քեզ վարձատրութիւն... Ահա՛ քեզ... (Հատաքում է թղթի կտորները և գնում նորա ձեռքում.) Ես ձեզնից ոչինչ չեմ վերցնել, այստեղ ամէն ինչ ձերն է...

ԺԱՆԷՏ

Չէ՛, չէ՛, ձերն է...

ԺԱՆՆՕ

Չէ՛, ձերն է, ձերը։

ԺԱՆԷՏ

Դուք ինձ ինչո՞ւ էք «դուք» ասում։

ԺԱՆՆՕ

Չեմ համարձակում։

ԺԱՆԷՏ

Ինչո՞ւ չէք համարձակում։

ԺԱՆՆՕ

Ինչո՞ւ չեմ համարձակում։ Այն պատճառով, օրիորդ Ժանէտ, որ դուք անգին աղջիկ էք։

ԺԱՆԷՏ

Բայց ախր...

ԺԱՆՆՕ

Չէ՛, էլ խօսք չունիք։ Իսկ ես ձեզ հետ համեմատելով օրիորդ Ժանէ՛տ, մի անպիտան արարած եմ։ Մօրեղբայրս շատ խելօք է վարուել, որ ոչ թէ ինձ, այլ ձեզ է կտակել իր բոլոր հարստութիւնը. և կալուածքը, և տունը և փողերը։ Ահա՛, այս ձեր փողերն են։ Դուք արժանի էք դորան, օրիորդ Ժանէտ. իսկ ես ո՛չ։

ԺԱՆԷՏ

Բայց ախր...

ԺԱՆՆՕ

Չէ՛, դուք էլ մի՛ վիճէք. ես ոչինչ չարժեմ։ Մընա՞ք բարով, օրիորդ Ժանէտ... Երջանիկ եղէ՛ք, օրիորդ Ժանէտ... (Վերցնելով սեղանից գլխարկը.) Էլ չյիշէք ինձ...

ԺԱՆԷՏ

Ո՞ւր էք գնում...

ԺԱՆՆՕ

Դերթամ որ կողմը ճանապարհն է։

ԺԱՆԷՏ

Ա՜. հին պարոնիդ մօտ։

ԺԱՆՆՕ

Նա էլ ինձ չի ընդունի։ Ես նրան զզուեցրի իմ վարմունքով։

ԺԱՆԷՏ

Ա՜յ, ա՜յ, ա՜յ . . . ինչո՞ւ այդպէս արիք։

ԺԱՆՆՕ

Արի էլի։ Կարծում էի թէ հարուստ եմ . . . ուզում էի ոյժս ցոյց տալ . . . և այս բոլորը աւելի յիմարութիւնից էի անում . . . (Գնում է.) Մնա՞ք բարով, օրիորդ Ժանէտ. (Կանգնելով վերջին դրան մօտ.) Գիտէ՞ք ինչ է։ Ինձ ձեր ծառայ ընդունեցէք։

ԺԱՆԷՏ

Ի՞նչ էք ասում։

ԺԱՆՆՕ

Ես ասում եմ որ եթէ ձեր կամքին հակառակ չի լինիլ, այն ժամանակ ես . . . մեծաւ ուրախութեամբ։

ԺԱՆԷՏ, ծիծաղելով.

Լ Հա՜, հա՜, հա՜. բայց այդ ինչպէս կը լինի . . . հա՜, հա՜, հա՜։

ԺԱՆՆՕ

Դուք այժմ տանտիկին դառաք — և ձեզ առանց ծառայի անկարելի է ապրել — ինքներդ դատեցէք։

ԺԱՆԷՏ, ուրախ.

Եթէ դուք անպաճառ կամենում էք ծառայ լինել, ես չեմ կարող ձեզ մերժել։

ԺԱՆՆՕ

Իրա՞ւ . . . Այդպէս ուրեմն վճռուած է։ Դուք թողնումէք ինձ ձեզ մօտ. մեծապէս շնորհակալ եմ ձեզնից։ Իմ ծառայութեանս առաջին փորձը այն կը լինի, որ ես ձեզ համար սեղան կը պատրաստեմ. դուք կ'ուտէք ինձ համար պատրաստած

բաղը։ Գնացէ՛ք զարդարուեցէք ձեր նոր շորերով։

ԺԱՆԷՏ

Ինչո՞ւ համար։

ԺԱՆՆՕ

Այդպէս է հարկաւոր, և բոլոր այս մանր մունր բաներն էլ ձեզ վրայ չինեցէք։ Ես այդ բաները առել եմ ձեր փողերով . . . Կլօդինայի համար . . . (Ասանձին.) Ո՜հ, ես անպիտանս . . .

ԺԱՆԷՏ

Հա՜, հա՜, հա՜ . . . այդ շատ լաւ է . . .

(Սկասին.)

№ 8

ԺԱՆԷՏ

Հագնուիմ ես շուտով,
Անկասկած մեծ չքով,
Նոր կարած շորերս շատ մեծ շնորքով։
Եւ այժմ ձեզ կ'ասեմ
Ողջին զմայլեցնեմ,
Թէ որ հագուստս յարմարեցնեմ.

ԺԱՆՆՕ

Հագէք դուք շուտով
Անկասկած մեծ չքով
Նոր կարած շորերդ շատ մեծ շնորքով։
Ես էլ ձեզ կ'ասեմ
Ողջին կ'զմայլեցնէք,
Թէ որ հագուստդ յարմարեցնէք։

ԺԱՆԷՏ

Հագնուեմ ես շուտով ելն. (Դուրս է գնում։)

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԺԱՆՈ, մենակ.

Զարմանալի բարի սիրտ ունի . . . էլի պահեց ինձ իրա մօտ, թէ չէ ո՞ւր պիտի կորչէի այս ժամանակ։ Բայց հարկաւոր է սեղան պատրաստել . . . Ո՞րտեղ կը լինին դրած ամանները։ Ահա այստեղ է։ (Դարսում է սեղանի պատկանելիքը.) Չէ՛, ի՞նչ ազնիւ սիրտ ունի այս ժանէտը. ուղիղն ասած հրեշտակ է։ Ահա՛ սորան կ՚ասեմ աղջիկ . . . Եւ ի՞նչ սիրուն էլ է. ի՞նչ հրապուրիչ դէմք. մէջքը բարակ, բոյը կ՚ասես չինար լինի։ Զգիտեմ թէ դուք ինչպէս էք կարծում, բայց ես այդ չատ եմ սիրում։ Իսկ աչքերը. ի՞նչ կախարդիչ աչիկներ են։ Ես կարծում եմ, որ այսպիսի աչքեր ողջ աշխարհումն էլ չի լինիլ։ Այո՛, պարզ է, որ չի լինիլ և չի էլ կարող լինել . . . բաւական է մի նայէ ձեզ. իսկոյնեւթ ձեզ էլ դէպի իրան կը քաշէ. ահա և ինձ էլ քաշում է։ Զգիտեմ թէ դուք ի՞նչ էք կարծում, իսկ ես այս չատ եմ սիրում։ (Դնում է սեղանի վերայ գինու շիշը.) Այս բոպէիս կեանքս կը զոհէի, եթէ կարողանայի մի համբոյր դրոշմել նորա վարդագոյն թշերին, բայց միայն չհամարձակեցայ։ Զարմանալի՞ բան, ինձ թվում է թէ ես բոլորովին փոխվել եմ . . . Սիրահարուած չե՞մ արդեօք։ Պարոնները, կարծեմ սիրահարուել եմ . . . Այս էր պակաս։

№ 9

Առաջ ես էի հրաման տալի,
Բայց մին էլ . . . ո՞վ կը մտածէր,
Թէ ինչպիսի քամբաղդութիւն

Թշուառ գլխովը պիտ՚ անցնէր։
Տուն, տեղ, ամեն ինչ մոռացայ,
Սատանի հետ ընկերացայ. —
Աղախնուս վրայ սիրահարուեցայ,
Եւ նրա խոնարհ ծառան դարձայ։—

Նա այնպէս ջերմ սրտով ուզեց
Ժառանգութիւնն ինձ յետ դարձնել.
Որ այս սրտիկս գնահատեց
Եւ խոստացաւ միշտ նրան սիրել։
Ցերեկը քնից վեր կենալուս,
Նրա վրայ միայն կը հառաչեմ.
Թէ երբ կը լինի որ աղախնուս,
Իմ տան տիկինը անուանեմ։

(Դուռը բախում են։)

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԺԱՆՈ ԵՒ ԺԱՆԷՏ

ԺԱՆԷՏ, նեղս է վազում նոր շորերով, ձեռքին բռնած ունի գլխի փոթիլթիլուն.

Գալիս եմ, գալիս։

ԺԱՆՈ, սանձին.

Ինչ սիրուն է . . . (Նորան.) Ո՞ւր էք վազում . . .

ԺԱՆԷՏ

Դուռը ծեծում են, պիտի բաց անեմ . . .

ԺԱՆՈ

Թոյլ տուէք ինձ, այժմ այդ իմ գործն է . . .
(Կանգնեցնում է Նորան։)

ԺԱՆԷՏ

Սա էլ բան ասաց։ (Դարձեալ բախում են.) Էլ ի՞նչ էք կանգնել։

ԺԱՆՈ

Գնում եմ, գնում։ (Դուրս է վազում։)

ՏԵՍԻԼ Ժ Գ.

ԺԱՆԷՏ, մենակ.

Ի՞նչ անեմ, եթէ այս կլօդինան լինի . . . Տեսնենք, կը բերի նրան այստեղ թէ չէ . . . չէ՛, չի՛ բերի . . . բայց ինչն է ծիծաղս գալի. մէկ քանի րոպէ սրանից առաջ նա ինչպէս աշխոյժ էր, համարձակ. իսկ հիմայ դարձաւ հեղ, ամօթխած։ Ես առաջ նրանիցն էի վախենում, իսկ այժմ կարծես նա ինձնից է վախենում։

ՏԵՍԻԼ Ժ Դ.

ԺԱՆՈ ԵՒ ԺԱՆԷՏ

ԺԱՆՈ, փունջը ձեռքին.

Ահա ձեզ փունջ։

ԺԱՆԷՏ

Ի՞նձ . . . ո՞ւմից . . .

ԺԱՆՈ

Մէկ ինչ որ ծերունի բերեց, լղար, անշնորք, երկար. բարակ ոտներով . . .

ԺԱՆԷՏ

Պ։ Ժիրաֆ՝ մեր գիւղի գրագիրը . . . (Լսա է քաշում։) Լեզուով չեմ կարող պատմել ձեզ թէ ինչպէս նա ինձ սիրում է . . .

ԺԱՆՈ

Ա, ա. նա ձեզ սիրում է . . .

ԺԱՆԷՏ

Ի հարկէ, սիրում է . . . էլ հանգստութիւն չէ տալիս։

ԺԱՆՈ

Ափսոս որ ես այդ չգիտէի . . .

ԺԱՆԷՏ

Թէ չէ ի՞նչ կ՚անէիք . . .

ԺԱՆՈ

Մէկ այնպէս փունջ կը տայի նորան, որ իր օրումը տեսած չլինէր . . . (Զգում է փունջը յատակի վերայ։)

ԺԱՆԷՏ

Ի՞նչ լաւ է . . . Ձեզ ո՞վ իրաւունք տուեց . . . (Տեսնում է Նամակ թաքցրած փնջի մէջ.) Նամակ . . .

ԺԱՆՈ

Ի՞նչ անպիտանն է։ Փուչ կենդանին նամակ էլ է թագցնում փնջի մէջ։ (Կոպիտ։) Տեսնենք ինչ է գրում . . . (Առնում է ձեռքից նամակը։)

ԺԱՆԷՏ

Դուք ուզում էք կարդալ . . .

ԺԱՆՈ, կանգնելով.

Մեղաւոր եմ . . . բոլորովին մոռացել էի, որ հիմի դուք էք տանտիկինը . . .

ԺԱՆԷՏ

Ասացէ՛ք խնդրեմ . . . Ես էլ բոլորովին մոռացել էի . . . բայց ոչինչ. ողջը մին է . . . կարդացէք, ես խօ կարդալ չգիտեմ։ Ես ինքս էլ ցանկանում եմ շուտով իմանալ թէ ինչ կարող էր նա գրել . . . (Բացում է նամակը և բռնում Ժանոյի աչքի

առաջ, աշխատելով ինքը կորցալ.) Պատրաստ էք։

ԺԱՆՆՕ, կարդալով.

«Աննման օրիորդ Ժանէտ»։

ԺԱՆՆԷՏ

«Աննման օրիորդ Ժանէտ», լաւ է սկսում։ Տեսնենք վերջը ինչ կը լինի։

ԺԱՆՆՕ

«Ես այրվում բորբոքվում եմ».

ԺԱՆՆԷՏ

Այրվո՞ւմ։ Ի՞նչն է այրվում բորբոքվում . . .

ԺԱՆՆՕ

«Այրվում եմ ձեր կախարդիչ աչքերի սիրով։

ԺԱՆՆԷՏ

Ա՜, ա՜. այդ շատ լաւ է . . .

ԺԱՆՆՕ

Դուք հաւանումէք . . .

ԺԱՆՆԷՏ

Ի հարկէ . . .

ԺԱՆՆՕ, շարունակելով.

Հըմ. կախարդիչ։

ԺԱՆՆԷՏ, խօսքը վերջացնելով.

«Աչքերի» յետոյ . . .

ԺԱՆՆՕ

«Դուք այնպէս գեղեցիկ էք».

ԺԱՆՆԷՏ

Ես եմ գեղեցիկը։

ԺԱՆՆՕ

«Խելօք»։

ԺԱՆՆԷՏ

Այդ էլ ես եմ։

ԺԱՆՆՕ

Համբերի՛ր, սպասդ կ'եփեմ։

ԺԱՆՆԷՏ

Ինձ համար։

ԺԱՆՆՕ

Նոյ Նահապետի ագռաւ։

ԺԱՆՆԷՏ

Ի՞նչպէս թէ Նոյ Նահապետի ագռաւ . . . Այս այդտե՞ղ է գրած . . . կարելի է այդ չէ գրած . . .

ԺԱՆՆՕ

«Դուք այնպէս գեղեցիկ էք, խելօք և համեստ, որ ես առաջարկում եմ ձեզ իմ ձեռքս և սիրտս» . . .

ԺԱՆՆԷՏ

Ի՞նչ էք ասում . . . Ճշմարի՞տ։

ԺԱՆՆՕ

«Իմ սիրտս և ձեռքս» . . . Անպիտան քաւթառ։ (Տրորում է նամակը։)

ԺԱՆՆԷՏ

Այդ բոլո՞ր է, թէ էլի կայ . . .

ԺԱՆՆՕ

«Թոյլ տուէք ինձ գալ այսօր ձեզ մօտ ընթրելու, որ աւելի լաւ խօսենք ինձ համար այնպիսի մեծ կշիռ և նշանակութիւն ունեցող գործի մասին որով հնում ձեր երկրպագու» . . . (Տրորում է նամակը։)

ԺԱՆՆԷՏ

Տեսնո՞ւմէք . . . ինձ վրայ ուզում է պսակուիլ . . . այդ շատ գովելի է նորա կողմից . . . դուք ի՞նչ կ'ասէք, պ. ԺանՕ։

ԺԱՆՆՕ, տաքացած.

Ես ինչ կ'ասեմ . . . (Կանգնում է.) Ոչինչ չեմ ասիլ։ Այդ իմ գործը չէ . . .

ԺԱՆԷՏ

Բայց եթէ ես խնդրէի ձեզնից օգնել ինձ ձեր խորհրդով:

ԺԱՆՈ

Այն ժամանակ . . . Այդ ուրիշ է . . . Այն ժամանակ ես ձեզ կ'ասէի. թէ այդ ժիրաքը ձեզ արժան չէ' . . . Նախ որ ծեր է . . . չգիտեմ թէ ձեզ ինչպէս է երևում, բայց ինձ այդպէս է թվում:

ԺԱՆԷՏ

Ինձ էլ այդպէս է երևում . . .

ԺԱՆՈ

Եւ երկրորդ որ դուք այնպէս գեղեցիկ էք. իսկ նա այնպէս տգեղ է, գլխին մի մաղ անգամ չէ մընացել: Չգիտեմ ձեզ ինչպէս է երևում, բայց ինձ այդպէս է թվում:

ԺԱՆԷՏ

Ինձ էլ այդպէս է թվում:

ԺԱՆՈ

Եւ վերջապէս եթէ դուք նորան թոյլ կը տաք մնալ ձեզ մօտ մենակ, էգուց ողջ գիւղը ձեզ վրայ կը խօսի . . .

ԺԱՆԷՏ

Բայց ի՞նչ կը խօսեն,

ԺԱՆՈ

Ի՞նչ . . . այն, ինչոր այդպիսի դէպքերում միշտ ասում են:

ԺԱՆԷՏ

Բայց միշտ ի՞նչ են ասում:

ԺԱՆՈ

Քի՞չ բան կայ ասելու. զանազան բամբասանքներ . . . Եւ բանը կը վերջանար նորանով, որ դուք անպատճառ նրա հետ պիտի պսակուէիք, որովհետև ուրիշ ոչ մէկը արժան չէր համարի ձեզ հետ պսակուելու:

ԺԱՆԷՏ

Մի՞թէ:

ԺԱՆՈ

Այս բաները շատ լաւ է իմանում ծեր աղուէսը, այդ պատճառաւ էլ ուզում է ձեզ մօտ գալ . . .

ԺԱՆԷՏ

Նա ի՞նչ կարող էր ինձ անել, եթէ մենք մենակ մնայինք . . .

ԺԱՆՈ

Ո՞ր մէկն ասեմ. շատ կարելի է, օրինակի համար կ'ուզենար ձեզ համբուրել.

ԺԱՆԷՏ, *կոտրտվելով.*

Բայց մի՞թէ միշտ համբուրում են միմեանց, երբ մենակ են մնում,

ԺԱՆՈ, *մրմնջելով.*

Այո՛ . . . մեծ մասամբ:

ԺԱՆԷՏ

Ժանո՛:

ԺԱՆՈ

Ի՞նչ էք կամենում:

ԺԱՆԷՏ

Ինչու՞ չէք մօտ գալիս . . . աւելի մօտ եկէք . . . ես խօ ձեզ չեմ ուտի . . .

ԺԱՆՈ

Ա՜խ, Աստուած իմ, ի՛նչ աչքերով է նայում ինձ:

№ 10

ԺԱՆԷՏ

Ա՛Հ, մօտեցէ՛ք

ԺԱՆՕ

Վախենում եմ . . .

ԺԱՆԷՏ

Մի՞թէ ամօթ չէ վախենալ.
Հաւատացէք, չեմ բարկանում,
Երբ համբուրել եմ ցանկանում.

ԺԱՆՕ

Ես չեմ կարող։

ԺԱՆԷՏ

Ինչու՞ համար.
Ու այստեղ ինչ մեծ յանցանք կայ,
Երբ որ մեր այս համբուրելուն,
Ինձնից արդէն հիշատ հրաման կայ։

ԺԱՆՕ

Ուր որ հարս ու փեսայ չը կայ,
Այնտեղ համբոյր վնաս կը տայ։

ԺԱՆԷՏ

Համբուրելում վնաս չը կայ,
Գլխիցդ յիմար բան մի դուս տար։

ԺԱՆՕ

Այս ի՞նչ ծխի հոտ է գալիս, հա՞ . . . շատ կաբելի է խորվածը այրվել է . . .

ԺԱՆԷՏ

Ես կ'երթամ . . .

ԺԱՆՕ

Ո՛չ, ո՛չ, այժմ այդ իմ բանն է . . . մի նեղանաք . . . ես (Դուրս է գնում։)

ՏԵՍԻԼ ԺԵ.

ԺԱՆԷՏ, մենակ.

Ճշմարիտ չգիտեմ թէ ինչպէս համոզեմ նորան յետ վերցնելու իր ժառանգութիւնը . . . Նա կարծես թէ չէ ուզում ինձ լսել. Ես ամէն ինչ անում եմ, որքան կարողութիւնս ներում է. Ես մեղաւոր չեմ, որ նա ոչինչ չէ նկատում։—Ա՜խ, ի՞նչ գեղեցիկ միտք . . . Այո՛, իրաւ որ . . . Փորձենք այս միջոցն էլ — նա գալիս է . . . Շուտով սկսենք գործը։ (Դարսում է սեղանի վերայ ամանները էլի մէկ մարդու համար. յետոյ վազում է դէպի պատուհանը և դիտմամբ խօսում փողոցում երբ թէ մարդ կայ այնտեղ.) Ես համաձայն եմ, պ. Ժիրաֆ, քառորդ ժամից յետոյ համեցէ՛ք . . . Ի՞նչ . . . այո՛, այո՛ . . . ոչ ոք չի լինի—մնա՛ք բարով . . .

ՏԵՍԻԼ ԺԶ.

ԺԱՆՕ ԵՒ ԺԱՆԷՏ, (Ժանօն մտնում է վերջին խօսքերի միջոցին և վայր է դնում բաղը։)

ԺԱՆԷՏ

Այդ ի՞նչ արիք, ի՞նչ անշնորք էք եղել։

ԺԱՆՕ

Ոչինչ, այս բոպէին կը հաւաքեմ . . . (Բռնում է վերցնել խորոված և նորից վայր է դնում։)

ԺԱՆԷՏ

Թողէ՛ք, աւելի լաւ է ես . . . (Առանձին.) կարծեմ սա քիչ յիմար է։

ԺԱՆՕ առանձին.

Սա ամաններ է աւելացրել։ Այս այն քաւթառ ծերի համար է . . . ա՜խ, անիծեալ Ժիրաֆ . . .

ԺԱՆԷՏ

Այդ ի՛նչ էք ասում պ. Ժիրաֆի մասին։

ԺԱՆՈ

Ե՞ս . . . ես ինձ ու ինձ եմ ասում, թէ ինչ երջանիկ է այն Ժիրաֆը։

ԺԱՆԷՏ, պահարանից հացը հանելով.

Ինչո՞ւ։

ԺԱՆՈ

Այն պատճառաւ որ ձեզ հետ ընթրիք կ'անէ։

ԺԱՆԷՏ

Բայց դուք այդ ո՞րտեղից իմացաք։

ԺԱՆՈ

Այս բոպէիս դուք նորան պատուհանից ասում էիք . . .

ԺԱՆԷՏ, մտմտնալով.

Ձեզ այդ դուրեկան չէ՞ . . .

ԺԱՆՈ

Ի՞նձ . . . Այսինքն, չգիտեմ ինչ ասեմ ձեզ . . . ի հարկէ ես այդ բանում ինձ համար մի մեծ բաւականութիւն չեմ զգում։

ԺԱՆԷՏ

Ինձ ի՞նչ փոյթ . . . չէ՞ որ ես հիմի տանտիկին եմ . . . այո՞ . . .

ԺԱՆՈ

Այո՛, օրիորդ Ժանէտ . . .

ԺԱՆԷՏ

Չէ՞ որ ես այժմ իմ տանը կարող եմ, ամէն ինչ անել, ինչ որ կամենամ . . . այո՞։

ԺԱՆՈ, ակ քաշելով.

Այո՛, օրիորդ Ժանէտ։

ԺԱՆԷՏ

Այդ ի՞նչ է. կարծես թէ դուք բարկանում լինիք . . . Աւելի լաւ չէի՞ք անի, եթէ ձեր ժառանգութիւնը վերցնէիք . . . Այն ժամանակ դուք կը լինէիք տանտէրը և պարզ կարող էիք ինձ ասել. «Ժանէ՛տ, ես քեզ հրամայում եմ չթողնել իմ տանը պ. Ժիրաֆին . . . Ժանէ՛տ, ես քեզ արգելում եմ նորա հետ խօսել» . . . Եւ ես չէի համարձակուի չլսել ձեզ . . . Ես ամէնը այնպէս կը կատարէի, ինչպէս ինձ կը հրամայէիք . . . Դուք ինքներդ չուզեցաք, ո՞վ է մեղաւոր . . .

ԺԱՆՈ

Բայց եթէ ես հիմի ցանկանայի։

ԺԱՆԷՏ

Ի՞նչ։

ԺԱՆՈ

Տանտէր դառնալ։

ԺԱՆԷՏ

Ի՞նչպէս։

ԺԱՆՈ, տաքանալով.

Չէ՞ որ դուք ինքներդ պատրաստեցիք կտակը . . .

ԺԱՆԷՏ

Յետոյ . . .

ԺԱՆՈ

Էլ ինչ «յետոյ» . . . Դէ՜հ, էլի ինչ . . . ձեզ համար աւելի վատ . . . պէտք չէր պատռտել . . .

ԺԱՆԷՏ, առանձին.

Վերջապէս։

ԺԱՆՈ, առանձին.

Լռում է . . . (նորան.) Այո՛, ես եմ այստեղի տանտէրը, լսո՞ւմ էք . . .

ԺԱՆԷՏ

Լսում եմ։

ԺԱՆՆՕ

Եւ այդ պատճառաւ . . . Ժանէ՛տ, ես արգելում եմ քեզ ներս թողնել այս տանը պարոն Ժիրաֆին։

ԺԱՆԷՏ

Լսում եմ։

ԺԱՆՆՕ

Ժանէտ, ես քեզ արգելում եմ նորա հետ խօսել . . .

ԺԱՆԷՏ

Լսում եմ։ (Առանձին.) վաղ էիր ասել։

ԺԱՆՆՕ

Ա՜, ա՜, ա՜ . . . իմ առաջ . . . ա՜ա. ա՜յ այդպէս . . . այո՛ . . .

ԺԱՆԷՏ

Նշանակում է դուք հիմայ դարձեալ տանտէր էք։

ԺԱՆՆՕ, նստում է սեղանի մօտ.

Դարձեա՛լ . . . և այս պատճառաւ էլ իսկոյն կ՚ուտեմ խորոված բաղը։

№ 11

ԺԱՆՆՕ

Միայն ես պիտի տամ հրամաններ.

ԺԱՆԷՏ

Ես միշտ պատրաստ եմ կատարել։

ԺԱՆՆՕ, աթոռը վերցնելով.

Նստիր. իմ կամքս է հնազանդուել։

ԺԱՆԷՏ, նստելով.

Ձեր խօսքն իսկոյն կը կատարեմ։

ԺԱՆՆՕ, առանձին.

Ա՜խ, Աստուած իմ, ուրախութիւնից,

Էլ չեմ կարում գլուխս պահել։

(Ժանէտին քնքշաբար.)

Ժանէտ, ի՜նչ երջանկութիւն է
Քեզ հետ միասին քէֆ անել։

ԺԱՆԷՏ

Բաւական է դուք հրամայէք։

ԺԱՆՆՕ, տալով նրան շիշը.

Ծայրէ ի ծայր բաժակը լից.

ԺԱՆԷՏ

Ինչու՞ մինչև ծայրը լցնեմ։

ԺԱՆՆՕ

Ձայն չը լսեմ ես քեզանից։

ԺԱՆԷՏ, ածելով գինին.

Հրամայեցէք ինձ համարձակ։

ԺԱՆՆՕ

Ուրեմն թոյլ տուր, անգին թռչնակ,
Քեզ համբուրեմ միշտ համարձակ.
Դու էլ ինձ տուր համբոյր, հրեշտակ։

ԺԱՆԷՏ

Լաւ կ՚ուզէի համբոյրդ մերժել.
Բայց որ ուզում էք հրամայել։

ՏԵՍԻԼ Ժ Է.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ԿԼՕԴԻՆ ԵՒ ԺԻՐԱՖ

ԿԼՕԴԻՆ, ձախ պատուհանում.

Հիանալի՛ է, պ. Ժանո, խօսք չկայ, շատ հիանալի է . . .

ԺԻՐԱՖ, աջ պատուհանից.

Շատ լաւ է, օրիորդ Ժանէտ . . . շատ գեղեցիկ է . . . Շարունակեցէ՛ք, շարունակեցէ՛ք . . .

ԿԼՕԴԻՆ

Մի՛ նեղանաք, խնդրեմ . . . ես մի ուրիշ անգամ կը գամ . . . (Անյայտանում է։)

ԺԻՐԱՖ

Ձեր խոնարհ ծառան։ (Անյայտանում է։)

ԺԱՆՆՕ

Գնա կորիր միրգ քաղելու նորա հետ, ում հետ որ գնացել էիր։

ԺԱՆԷՏ

Ա՜խ, Աստուած իմ։

ԺԱՆՆՕ

Ի՞նչ պատահեցաւ . . .

ԺԱՆԷՏ

Ես ձեզ հետ միասին ընթրիք կերայ մենակ։

ԺԱՆՆՕ

Ի՞նչ անենք որ . . .

ԺԱՆԷՏ

Դուք ինքներդ գիտէք, որ գիւղի խօսելու կը դառնամ։

ԺԱՆՆՕ

Ա՜։

ԺԱՆԷՏ

Այժմ էլ ոչ ոք ինձ վրայ չի պսակուի։

ԺԱՆՆՕ

Սա էլ բան ասաց։ Քեզ պէս անգին թռչնակի համար գլխապատառ հարիւրներով մարդացուք կը գան . . .

ԺԱՆԷՏ

Ես այդքանը չեմ ուզի. ես միայն մինին կ'ուզեմ։

ԺԱՆՆՕ

Եթէ դու բարեհաճէիր, ես այս րոպէիս կը գըտնէի քեզ համար մինին։

ԺԱՆԷՏ

Ո՞վ է այդ մինը։

ԺԱՆՆՕ

Այդ մի՞նը։ Բարեկամներիցս մէկը։

ԺԱՆԷՏ

Ա՜։

ԺԱՆՆՕ

Հէնց ինձ պէս անպիտան, փուչ կենդանի։

ԺԱՆԷՏ

Ողջը մին է։

ԺԱՆՆՕ

Այսինքն ճիշտ ինձպէս։

ԺԱՆԷՏ

Եւ նա ինձ սիրում է։

ԺԱՆՆՕ

Օ՜, ինչպէս որ հարկն է . . .

ԺԱՆԷՏ

Ինչու նա չէ ներկայանում ինձ . . . ես կը ցանկանայի նորան տեսնել։

ԺԱՆՆՕ

Իրաւ. ճշմարիտ խօսք ես տալի՞ս։

ԺԱՆԷՏ

Ճշմարիտ խօսք։

ԺԱՆՆՕ

Եթէ այդպէս է, նա այս րոպէիս կը ներկայանայ ձեզ։ (Գնում է դռների մօտ և ծեծում.) Կարելի է ներս գալ։

ԺԱՆԷՏ, նստելով.

Համեցէ՛ք . . .

ԺԱՆՆՕ, ներկայանալով.

Օրիորդ Ժանէ՛տ, ահա նա ձեր առաջն է։

ԺԱՆԷՏ, վեր կենալով.

Դուք էք այդ մէկը . . . Այդպէս ուրեմն դուք ինձ սիրո՞ւմ էք, պ. Ժանո։

ԺԱՆՈ

Զարմից դուրս, իմ հոգեակ։

ԺԱՆԷՏ

Ի՞նչ երջանկութիւն է . . . ինչու դուք ինձ իսկոյն չասացիք։

ԺԱՆՈ

Մէկ քիչ յիմարացայ սիրուց։

ԺԱՆԷՏ

Իսկ ես ընդհակառակն, խելօքացայ։

ԺԱՆՈ ԵՒ ԺԱՆԷՏ

№ 12

Մեզ սպասում է երջանկութիւն,
Նոյն ինքն Աստուած մեզ միացրեց,
Իւր սուրբ աջով Նա մեզ օրհնեց.
Մենք էլ այնպէս երջանիկ ենք։

(Գ. ԱՐԱՔԵԼԻՆ ԴՐՈՒՄ Է)
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀ. ԳՐԱԳԱՐԱՆ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆՑ

Ծանօթ.— Սոյն հատուածի երգերի եղանակները եւրոպական նօտաներով՝ զրուած օրկեստրի համար՝ գտնվում են հրատարակչի մօտ։ Յանկացողները կարող են նորան դիմել։

21 MAY 2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0666873

179 72